ՏԱՐԻ Ե. ՇԱԲԱԹ 13 ՅՈՒԼԻՍ 1902 ԹԻՒ 433

WIEN ESTELLT 23.7.02 V.

R. P. Kalemeran, Mechitaristengasse (Aufnicht) Wien

ՇԱՐԺՈՒՄ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ. ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԶՈՐԵՔՇԱԲԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ.

Պուլկարիոյ համար
տարեկան 12 Ֆր
Վեցամսեայ 6 »
Արտասահմանի
համար տարեկան 15 »
Վեցամսեայ 8 »

Ամերիկայի համար
Տարեկան 3 տր.
Վեցամսեայ 1.50 »

Դանուցման տողը առաջին երեսին համար 40 ս. իսկ վերջին երեսի համար 20 սանթիմ. երեքին տեղի անցամենորու համար 20 Սանթիմ տող կը լայ։

Վառնայի համար ձեռք 10 սանթիմ

Նամակներ դրամ ղրկել խմբագրութեանս հասցեին։

Редакция на вѣстникъ
«Шаржумъ»
Варна

Redaction du journal
« Charjoum»
Varna (Bulgarie)

—o—

Արտասահմանի համար ձեռք
)(20 ՍԱՆԹԻՄ)(

Պուլկարիոյ համար ձեռք
≍ 15 ՍԱՆԹԻՄ ≍

Գրութիւնք ետ չեն տրուիր

«ՇԱՐԺՈՒՄ»Ի ԲԱԺԱՆՈՐԴ ԳՐՈՒՈՂԸ ԲԱԺՆԵԳԻՆԸ ՊԷՏՔ Է ԿԱՆԽԻԿ ՎՃԱՐԷ

ՀԱՅԱՍԷՐՆԵՐԻ ՀԱՄԱԺՈՂՈՎԻՆ ԲՐԻՍԷԼՈՒՄ

Պարոններ, Երախտագիտութեան խորին զգացումով եւ հիացմամբ ողջունում ենք ձեզ կուռ եւ տանջվող հայ ժողովրդի անունով։

Այս համաշխարհային ըէակցիայի եւ եսասիրութեան միջոցին քաջալերական է տեւնել ամեն կարծիքի մարդկանց փայլուն մի շարք, որը իրեն նպատակ է դրել աշխարհի առջեւ պաշտպանել այնքան երկար ժամանակ լքված մի ողբերգական դատ։

Մենք, ներկայացնելով հայ ժողովրդի կուռ կուսակցութիւնը՝ ձեզ ենք ներկայացնելու նրա երկար մարտիրոսութեան պատմութիւնը։ դուք այդ աւելի լաւ գիտէք, մանաւանդ որ աւելի պերճախօս ու արտօնված ձայներ ինքզինքին լսեցնել կան Համաժողովին եւ մեզնից աւելի լաւ կը պատկերացնեն այդ պատմութիւնը։

Մենք ձեզնից խնդրում ենք միայն որ մեզ էլ թոյլ տաք խօսելու նրա մասին, որը կազմում է Համաժողովի բուն նիւթը, եւ մի քանի խօսքով պարզել մեր հայեցակէտները այն միջոցների մասին, որոնցով կարելի պիտի լինի վերջ դնել բնաջնջումի որ՝ մի ժողովրդի տանջանքներին։

Պարոններ,

Քան տարի է որ հայ ժողովուրդը, իմ՝ լուսաւորված մասը, համոզված էր թէ միայն խաղաղ պրոպականդան պիտի բաւէր, վերակազմելով Թրքական հայաստանը հաւասարութեան եւ արդարութեան սահմաններում, գոնէ իրականացնելու այն շնչին բարեքաջումը, որը մեզ խոստացված էր Բերլինի դաշնագրով։ Բայց դէպքերը շուտով փաստեցին այդ հաւատքի անհեթեթութիւնը։

Իսկապէս տարիներ անցան զուր եւ վշտալի սպասումի մէջ։ Օտարութեան մէջ գտնված մեր հայրենակիցները բոլորովին խաղաղ պրոպագանդա կազմակերպեցին դիւանագիտութեան վրա ազդելու նպատակով։ Նրանք անդադար ամփոփում էին արձանագրութիւնները, դիմումներ էին անում արտաքին գործոց նախարարներին, ցուցադրում էին հայ ժողովրդի անտանելի վիճակը։

Բոլորը դուր էր, Հայաստանի մէջ կացութիւնը չէր փոխվում։

Պաշտօնական Եւրոպան սուտ խուլ էր ձեւանում մի ժողովրդի օրինաւոր պահանջների հանդէպ, որին իր հովանաւորութեան տակ էր առել եւ որը միայն կեանքի ապահովութիւն էր խնդրում։

61րդ յօդուածը մի ողբալի կեղծիք էր մնում եւ միայն աւելի ծանրացնում էր հայկական տագնապը՝ բրոնաւորին զայրացնելով, նրան դէպի այն սարսափելի ոճիրները մղելով, որոնք արդէն ծանօթ են։

Պատրանքը տաժանելի եղաւ։ Սուլթաններ դարաւոր օրինապահ հպատակ հայ ժողովրդի համբերութիւնը հատաւ։ «Բայան» ապստամբեց։ Մրաքի հայերը, նոյն իսկ ամենախաղաղասէրները, վերջնապէս հասկացան որ Եւրոպան արիւն է ուզում, որ միայն զինված կոիւը կարող է դիւանագիտութեան ձեռքը շարժել տալ։

Կռիւը հանդիսադրվում էր։ Նախ եւ առաջ պէտք էր ունեւոր աշխատաւորներին իրենց դաշտերում պաշտպանել հանդէպ բարբարոսների՝ քրտերի եւ թուրք զինւորների, որոնք ամեն օր խլում էին նրանց աշխատութեան արդիւնքը, տանջում էին նրանց, մահ էին սպառնում, բռնաբարում էին նրանց աղջիկներին, սրբապղծում էին սրբութիւնները, առանց երբէք պատժվելու եւ հալածվելու մահմետական իշխանութիւնների կողմից։

Այսպիսի պայմաններում ըմբոստացումը տիրական անհրաժեշտութիւն է դառնում։

Ու Կոմիտէներ հիմնեցին ժողովրդի պաշտպանութիւնը կազմակերպելու համար։ Նրանց պահանջները շատ համեստ էին։ Նրանց պահանջածը միայն Եւրոպացու հովանաւորութեան տակ մի ինքնավար Հայաստան էր։—Միակ պայմանը երկրի կանոնաւոր յառաջադիմութեան։

Երբեմն այդ կոմիտէները, բարեյաջող պարագային, յարձակողական դիրք էին բռնում Եւրոպական միջամտութիւն առաջ բերելու համար։

Հաւանական է որ դուք յիշում էք Պոլսում տեղի ունեցած, 1890ին Գում Գափուի ցոյցը, 1895 Բ. Դրան առջեւ եղած ցոյցը։ 1896ին Բանք Օթոմանի վրա եղած յարձակումը, 1895ի վերջին Զէյթունցիների հերոսական ապստամբութիւնը, Խանասորի ճակատամարտը 1897ին եւ անվեհեր Սեբոբի սքանչելի դիմադրութիւնը, նոյնպէս եւ նրան յաջորդող Անդրանիկինը, որը այս բոպէիս իր թռչուն հրոսակախմբերով Սասունում է գտնվում։

Դուք յիշում էք նաեւ պետութիւնների, երբեմն եռանդուն, միջամտութիւնները, որ հետեւում էին այդ ապստամբական կռիւներին։ Լինում էին բոպէներ որ անողոք ճակատագիրը ժպտում էր Հայաստանին։ Բայց աւա՜ղ, այդ միայն ցնորք մնաց։ Եւրոպան ազդու մրջոց չը գործադրեց—Ելարզ քէօշկին հասկանալի միակ ոճը։ Եւրոպան բաւականացաւ միայն պղատոնական ցակութիւններով, որոնք արտայայտեցին 1895ի մայիս 11ին կազմված բարենորոգումների հռչակաւոր ծրագրով։

Աբդիւլ Համիտը պետութիւնների իրարու մէջ ունեցած ողբմելի վէճերից քաջալերվելով, որոշեց վերջ տալ հայկական հարցին եւ հրամայեց մեր հայրենակիցներից մի քանի հարիւր հազարին ջնջել։

Եւ կարգը վերահաստատվեց Հայաստանի մէջ։ Այնտեղ տիրեց գերեզմանական լռութիւնը։ այդ ամենասոսկալի եւ չը տեսնված մի ըէակցիա էր, որ բռնապետութիւնը պայթեցնում էր ազատագրութեամբ տոգորված մի ժողովրդի դէմ։

Մեծ կոտորածները, կարմիր եւ ճերմակ տէրորը տարիների ընթացքում, չը կարողացան հայկական ցեղի հրաշալի կենսունականութիւնը կասեցնել։ Նա դեռ ոտքի վրա է, թէեւ արիւնլայ։ Նա դարերով դիմադրաւել է երկիրը խուժողների յարձակումներին, միշտ անմրմնջելի եռանդով իր գոյութեան համար կռիւ է մղել։ կռիւ որը քաղաքակրթութեան համար էր։

Ուրեմն հայկական խնդիրը միշտ գոյութիւն պէտք է ունենայ, որովհետեւ նա Արեւելքի յառաջադիմութեան խնդիրն է։ Ցայտնի նշաններ ցոյց են տալիս որ նա հետզհետէ աւելի ծանր կերպարանք պիտի ընդունի։

Խմբովին մորթումները, որ տեղի ունեցան քաղաքակրթեալ կոչված պետութիւնների անտարբերութեան առջեւ հայ ժողովրդի համար մի դառն դաս եղան։ Այժմ, հայ ժողովրդը աւելի քան երբէք համոզված է որ իր փրկութիւնը կայանում է ըմբոստացման մէջ։ Այդ յաւիտենական եղեռերգութեան մէջ, ուր մորթող քրդերի դժոխային ճիչերը խառնվում են զոհերի հեծեծանքի հետ, ամենաթոյլ արարածնիսկ բռնադատվում է ապստամբ դառնալ։

«Ճակատագրական է երեւում-ասում էր պ. Դէլկասսէն ինքը, ֆրանսական երեսփոխանական ժողովի բեմից, 1902ի յունվար 20,—ճակատագրական է թւում որ այն ժողովուրդները որոնք անընդհատ և անպատիժ կերպով մորթվում և թալանվում են, կը վերջացնեն յայտարարելով՝ ամեն բան աւելի լաւ է, քան հեկտակոմբերի կոչտարի մէջ ապրած կեանքը»։

Միթէ այս հայկական յեղափոխական շարժման դիւանագիտական սրբագործումը չէ՞։

Լաւ ժամանակն է, պարոններ, աշխարհին ըմբռնել տալու այս անժխտելի և վշտալի իրողութիւնը։ Հայաստանը խմորումի մի ընդարձակ դաշտ է ներկայացնում, և տարօրինակ կը լինէր, եթէ ուրիշ կերպ լինէր։

Զէնքը ձեռքին ընդհանուր ապստամբութիւն բարձրացնելու գաղափարը հետզհետէ աւելի և աւելի տարածվում է։ Ցարմար բոպէին այդ անխուսափելի է։

Այդ է նկատվում մեր խնդրի լուծման ամենաադգու միջոցը։

Մենք, յանուն մարդասիրութեան և յառաջադիմութեան, խնդրում ենք բոլոր սրտի տէր մարդկանցից աջակցել հայ ժողովրդին իր ազատագրութեանը միջոցին։

Մարդասպան Աբդիւլ Համիտը գործի վրա է։ Օրը ցերեկով արդէն քստմնելի պատրաստութիւններ են տեսնվում, Մուշում, Սասունում և Զէյթունում։ Վերջին հինգ տարիներում հետեւողականօրէն հետապնդելով Հայ ազգի ջնջման գործին՝ սարսափով, մանր սպանութիւններով, խմբերով դաւանափոխելով, բռնի գաղթեցնել տալով, Եըլդզի հրէշը կրկին մեծ կոտորածների ծրագիր է պատրաստում։

Դուք էք, պարոններ, որ պէտք է արգելք հանդիսանաք Օսմանեան բարբարոսութեան։ դուք էք որ շարունակաբար դիւանագէտներին պէտք է մատնանշէք ներկայ և ապագայ վտանգները և ձեր դրական օգնութիւնը տաք հայ ժողովրդին, որը, իր գերագոյն յուսահատութեան մէջ, որոշել է ամեն զէնքով կռիւ մղել մինչեւ որ իր տարրական իրաւունքները յաղթանակեն։

Հայ յեղափոխական Դաշ. կողմից
Խմբագրութիւն «ԴՐՕՇԱԿ»ի
Ժրնեւ

Կեդրոն. Կոմիտէ
Հնչակեան Հայ յեղափ. կուսակցութեան
Լօնդոն

1902 Յուլիս

ՈՒՐ ԵՆՔ ԳՆՈՒՄ

(«Ռէֆօրմի» թիւ 23)

Սուլթան Համիդի կառավարութիւնը սիստէմատիկ, յաջորդաբար եւ կանոնաւորապէս կատարում է իր գործը Մակեդոնիայում եւ Օդրինի շրջակայքում. ոտնակոխ անելով եւ չէզոքացնելով թրքական լծի հակառակ կանգնող զօրութիւնը։

Հազար հոգու ոչ նուազ. Մակեդոնօ-Օդրինի բնակչութեան ծաղիկը, նետուել են թրքական զնդանները։ Դրանցից չորս հարիւրից աւելի աքսորական բերդերումն են, իսկ մնացածները կորչում են Մակեդոնօ-Օդրինի դահճանոցներում։ Մօտաւորապէս 6–700 հոգի ուսուցիչներ, քահանաներ, ինտիլիգէնտ երիտասարդներ ստիպուել են թողնել իրենց հայրենիքը եւ փախչել օտար երկիրներ, իսկ միւս 2–300ը զէն ի ձեռին թափառում են Մակեդոնօ-Օդրինի լեռներում։ Եւ ինչքան ուրիշ ինտելիգէնտներ, զարթնած ոյժեր ընկել են տաճկական թրից, տանջանքներից, հալածանքներից։ Ամբողջ շրջաններ Մակեդոնիայում եւ Օդրինի շրջակայքում (Ադրիանուպօլսոյ) ուր մի քանի տարիներ առաջ եռում էր կեանք եւ եռանդ, որոնք յեղափոխական ժարժման առաջին կարգերում են եղել, այժմ կործանուել քանդուել են։ Այնտեղ էլ չկայ ո՛չ ինտէլիգէնցիա, ո՛չ արթուն ոյժ, որը պահում է ժողովրդի հոգին։ Նրանք մեր հայրենիքի մեռած վայրերն են ներկայացնում այժմ։ Այսօր Մակեդոնիոյ հարաւ-արեւմտեան ամբողջ լայնութեամբ խաղցվում է մի ահռելի դրամա։ Բիտօլիայի վիլայէթը ողջ կրակի մէջ է։ Վիլայէթի հարաւային եւ հիւսիսային մասերը թալանվում են Արնաուտ խուժանից։ Օխրիտի, Ռէսէնի, Կէչէվօի եւ վերը Շար լեռնից մինչեւ Կօստիվարը մռայլ վայրցի մէջ է—կատարեալ ոչնչացում է սկսուել։ Նոյնպէս վիլայէթի միւս մասերում իշխանութիւնը, զօրքը եւ բաշի-բօզուկները չլսված կատաղութեամբ վայրագութիւններ են անում։ Պրիլէպի կազայում շատ գիւղեր հողերին են հաւասարած. ցանքսերը ոչնչացած տները քանդված փեթակները եւ արտերը սրբված, հօտերը սրի անցկացրած. գիւղացիները կոտորված, կիները եւ կոյսերը բռնաբարված կամ տարված հարեմները։ Դուք գիտէք թէ ի՞նչ է կատարվել Կրուշէվօում։ Այդ զուտ քրիստոնեայ քաղաքը կործանվել է։ Քաղաքացիների մի մասը բանտն է դրված, կաշկանդված ծանր շղթայով, ենթարկված տանջանքների, իսկ մնացածները անտառներում։ Դուք գիտէք թէ ի՞նչ է եղել Թամուր-Հիսարի ձորում. Այդ մաքուր քրիստոնեայ վայրը իր կուրիճ բնակչութիւնով կրակի եւ դանակի տակ է։ Գիւղացիների ամբողջ չորքեր, դահիճների փայլուն սուինների առաջ, աքսորվում են Պրիլէպի եւ Բիտօլիայի բանտերը. Դուք գիտէք թէ ի՞նչ է կատարվում այսօր Լերինի կազայում, Օստրովլճի մօտերը։ Պրոսէն հիմնայատակ է եղած, Էկշի-Սուն է կործանված։ Բուռնիցայի շրջանը եւ ամբողջ Լերինի կազան իրարանցման մէջ է։ Հաբիբառօր գիւղացիներ խաչաձեւ կտրում են լեռներն ու ձորերը եւ կատաղի կռիւ են մղում թուրքերի դէմ. յարձակվում են թուրքերը, ընկնում են քրիստոնեաները, կրակը լափում է մեր եղբայրների օջախները։ Դէպի հարաւ-Արեւմուտք, Նոյնիսկ Կոստուրի սրտումը, վայոցը ծաւալվում է։

— Դա ի՞նչ է նշանակում։

Ամէն մարդու ծանօթ է Սուլթանի քաղաքականութիւնը։ Նա ծրագրել է ջնջել քրիստոնեայ ազգութիւնը։ Այդ կոտորածում նա տեսնում է իսլամութեան միակ փրկութիւնը։ Այդ պատճառով նա դարձրեց Հայաստանը մի մոխրակոյտ եւ կոտորեց ոչ-պակաս 500000 հայ։ Նա ճգնում է կատարել նոյնը Մակեդոնիայում եւ Օդրինի շրջանում։ Սակայն նա ձգտում է իրագործել այդ միտքը այլ միջոցներով։ Մակեդոնիան եւ Օդրինը եւրոպական երկիրներ են. քրիստոնեայ իշխանութիւնների սահմանակից համացեղ ազգերով։ Այդ երկու երկիրները մօտ են եւրոպային, այդ երկու երկիրներում քրիստոնեայ ազգաբնակութիւնը մեծամասնութիւն է կազմում իսլամ տարրի դէմ։ Ուրեմն մի ընդհանուր սպանդանոց այստեղ վտանգաւոր է; Այդ սպանդանոցը տեղի կտայ ընդհանուր դիմադրութեան ազգաբնակութեան կողմից, դրացի ազգերի միջամտութեան, որը իր ետեւից կը բերի եւ մեծ ուժերի միջամտութիւնը եւ... ահա տաճկական թագաւորութեան վերջը։

Իր ծրագիրների գործադրութեան եւ այդ վտանգից զերծ մնալու համար նա ընտրել է մասնակի կոտորածը, որը վերջիվերջոյ նոյն արդիւնքները կը բերէ. այդ երկու երկիրները կը ներկայացնեն մի տապալուած դիակ, որպիսին է այսօր Թրքական Հայաստանը։ Ու այդ տխուր ջարդը մեր աչքերի առաջն է։ Այնչափ տեղեր կործանելուց յետոյ, ինտելիգէնցիայի ահագին մասը ջնջելուց յետոյ, այսօր սուլթանը լարել է իր ուժերը արեւմտեան Մակեդոնիան կոտորելու համար։

Երբ կապանէ ազգաբնակութեան այդ մասի հոգին, ձմեռը նա պիտի դառնայ դէպի արեւելեան Մակեդոնիա։ Այսօրվայ Բիտօլիայի վայրցը էգուց Սէլանիկին պէտք է տիրէ։ Եւ այդ ժամանակ Մակեդոնիան, որ դարեւ, կը լինի Հայաստանի պէս մի պատառված մարմին, եւ մակեդոնացին աւելի պինդ շղթայված կը լինի իր ստրկական կապանքներում, առանց ազատութեան յոյսի։ Եւ այդ կրիտիկական, սոսկալի րոպէներում ի՞նչ ենք տեսնում, ի՞նչ ենք տեսնում մենք։

Խօսողներ եւ քարոզներ. Մի քանիսը ուզում են նւիրվենք կրօնական վերածնութեան գործին, Մակեդոնիայում, որպէս զի պատրիարքական գրկից պոկենք 200000 բուլղարներ. ուրիշներ՝ համաձայնվենք Սուլթանի հետ, բարեկարգութիւնների համար եւ կամ Աւստրիայի հետ որ գրաւի Մակեդոնիան. միւսներ՝ սպասենք հոգեբանական ապստամբութեան նպաստաւոր մի վայրկեանի, իսկ ուրիշներ—դրանք են մեծերը եւ կամ ամենքն էլ յիմար պրինցիպաճիներ (բնագրից անփոփոխ)— մի կազմակերպված մասսային շարժման, որը 10—15 տարիներ յետոյ տաճկական թագաւորութիւնը սարսեցնող մի սոսկալի յեղափոխութիւն յառաջ բերէ։

200000 պատրիարքական բուլգարներ հաւաքենք կրօնական վերածնութեան գործի ոյժով։

Այո՛, այդ է Մակեդոնիայի ապատարար քաղաքականութիւնը։ Մինչեւ ժողովենք 200000, Սուլթան Համիտ կը կոտորէ միլիոն բուլղարներ կամ նրանց կը խլէ հողին, խլելով նրանց ամենակենսական ոյժերը։

(Շարունակելի)

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՎԵՐԱԾԻՆ

14

ՄԱՍ Ա.

ԳԼՈՒԽ Ե.

— Ուրեմն գնում ենք, շարունակեց Հեղինէն. հա, դուք ինարկէ ինձ այստեղ տեսնել չէիք սպասում. իմ այստեղ երեւալս սիւրպրիզ է չէ՞. ձեզ համար։

— Այո, սիւրպրիզ, եւ շատ լաւ սիւրպրիզ. բայց դուք այնտեղ չը յայտնեցիք որ այստեղ էք գալու։ Պատասխանեց Ծաղիկեանը։

— Եթէ յայտնէի, համ չէր ունենայ։ Բայց պարոն Ծաղիկեան, դուք տարօրինակ մարդ էք. յանկարծ կտրեց Հեղինէն։

— Ինչու եմ տարօրինակ օրիորդ, ի՞նչ էք ուզում ասել դրանով։

— Ոչինչ, գրեթէ բարկացած շարունակեց Հեղինէն։ Դուք պէտք է ասէք, ոչ թէ ես։ Աշխարհը յիմար սովորութիւններ ունի. կիներս ասելու, ուղղակի բացատրելու իրաւունք չունենք։ Կողմնակի, զարտուղի ճանապարհներով պէտք է հասկացնենք մեր սրտում եւ մտքում գտնվածը։

— Ինչո՞ւ էք հետեւում աշխարհի յիմար սովորութիւններին. դուք համակրելի էք նրանով, որ շատ անգամ ոտքի տակ էք տալիս այդ սովորութիւնները։

— Բայց ծիծաղելի դառնալու վախը կայ, պարոն Ծաղիկեան. իսկ մի օրիորդի համար այդ շատ անմարսելի եւ անտանելի է։

— Յամենայն դէպս իմ մօտ ծիծաղելի չէք լինի, որովհետեւ ես ձեզ շատ շատ եմ յարգում։

— Միայն յարգում էք-շշնջաց Հեղինէն, աչքերը գետին գցելով ու կարմրելով-խօսքը ուղղեց մի քիչ հեռուից գնացող Մարիային, որ իր մի ընկերոջ հետ զբօսի էր բռնված։

— Մարիա, խօսակցութիւնդ չը վերջացա՞ւ, եկ միասին գնանք։

«Միայն յարգում էք»-ից յետոյ, Հեղինէն ամբողջ մարմնով դողաց. նա վախեցաւ որ Ծաղիկեանը «յարգում եմ»-ին պէտք է աւելացնի եւ մի ուրիշ աւելի ճակատագրական խօսք։

Րոպէն վճռողական էր. Մարիան ուշանում էր. Ծաղիկեանը շփոթված էր եւ տատանվող վիճակի մէջ. Նա ուզում էր արտասանել. «Նաեւ սիրում եմ». բայց չէր կարողանում վճռել։

Վերջապէս նա դիմեց Հեղինէին.

— Օրիորդ, ներողութիւն. ինձ թւում է որ յարգանքից աւելի մի ուրիշ զգացմունք ունեմ դէպի ձեզ. բայց դեռ որոշել չեմ կարողանում։ Մի զգացմունք որը ինձ համար բոլորովին անծանօթ է։ Չեմ ուզում շտապել։ Այդ է պահանջում թէ ձեր եւ թէ իմ ապագան։ Աւելի լաւ կը լինի որ մենք մի քիչ իրարից հեռանանք. որոշենք այդ այսօրվանից։ Մենք թողնենք որ այդ զգացմունքը իր բնական ընթացքով զարգանայ, եթէ նա գոյութիւն ունի իսկապէս։

— Ո՛չ. ինչո՞ւ աշխատենք հեռանալ իրարից. վախցածի նման առարկեց Հեղինէն. ձեզ համար որոշ չէ, ինձ համար որոշ է, պ. Ծաղիկեան։ Ձեզ հանդիպելուց յետոյ իմ էութիւնը բոլորովին կերպարանափոխվել է. աւելի ճիշդը երեւան է եկել իսկական Հեղինէն. դուք չէիք իմանում թէ նախ քան ձեզ հանդիպելս կեանքը, մանաւանդ մեր քաղաքում ինձ համար որչափ աննպատակ եւ անգոյն էր։

Ինձ համար էլ մի քանի օր առաջ որոշ չէր։ Ես միայն զգում էի որ ձեր ներկայութեանը լաւ, շատ լաւ եմ։

Ես յայտարարում եմ ձեզ բարձրաձայնօրէն, որչափ էլ դա անսովոր, արտակարգ լինի, որչափ էլ մեր կեանքի ներկայ պայմաններում անվայել լինի մի օրիորդի համար. այսօր ինձ համար որոշ է. ես ձեզ սիրում եմ։ Միայն մի բան եմ խնդրում ձեզնից. դուք էլ անկեղծ լինէք։ Ազնիւ վարվէք միշտ, ինչպէս այսօր. սէր խօսքը արտասանեցէք միայն այն դէպքում, երբ հաստատապէս համոզուած կը լինէք թէ սիրում էք ինձ։ Եթէ խաբէք ինձ, այն ժամանակ կեանքը ինձ համար անտանելի կը լինի. ձեր անկեղծ բացասականը ինձ համար աւելի գերադասելի է, քան կասկածելի այոն։

Դուք չը գիտէք թէ ես որչափ մեծ հաւատք ունեմ ձեր անկեղծութեան եւ ազնւութեան վրա. եթէ այդ հաւատքը խորտակվի, ինձ համար փրկութիւն չի կարող լինել։ Հիմա գնանք. Ծաղիկեան, գնանք, շնչակտուր լինելով վերջացրեց Հեղինէն։

— Ո՞ւր գնանք, օրիորդ, շւարած առարկեց Ծաղիկեան։ Ո՞ւր գնանք, այս րոպէին, երբ դուք իմ առաջ բաց արիք մարդկութեան ամենամեծ տաճարը, որ սիրտ է կոչվում։ Ի՞նչ զոհ մատուցանեմ ես այդ տաճարի առջեւ, որ արժանի զոհաբերութիւն լինի։ Արժե՞մ ես արդեօք ձեր այդքան ուշադրութեան։ Գնանք օրիորդ մի ուրիշ կողմ, խօսենք։ Դուք ձեր սրտինը թափեցիք, իսկ ես չը գիտեմ ի՞նչ անեմ։ Իմ սիրտն էլ տակնուվրա է լինում. այնտեղ այս րոպէին մեծ փոթորիկ է բարձրացել, տարբերային զգացմունքների մի խառնաշփոթում է տիրում.

— Չէ, գնանք Ծաղիկեան, դուք ժամադրութիւն ունէք. մենք ձեզ հետ չենք գայ. ես հիմա ապահով եմ։ Դուք գիտէք որ ես ձեզ սիրում եմ. մէկ այս երեկոյ հօրաքրօջս տանը ժամանակ կունենանք իրար հետ երկար խօսելու. դեռ շատ բաներ ունեմ ասելիք ձեզ, որ միայն ինձ է վերաբերում. ձեզնից խորհուրդներ պէտք է հարցնեմ։ Բոյսի պէս ապրել չեմ ուզում. միայն ուտել, խմել եւ հագնելը ինձ ձանձրացրել է. գիտէ՞ք թէ հիմա որչափ երջանիկ եմ զգում ինձ.

Գնանք. Մարիան իր խօսակցութիւնը վերջացրել է ինչպէս երեւում է, շուտ շուտ այս կողմն է նայում. գնանք Մարիային ընկերանանք։

(Շարունակելի)

ԴԷՄԻՑ ԴԷՄԻՑ

Պրիւքսէլի Հայասէրներուն ժողովը անշուշտ պիտի գրաւէր Սուլթան Համիտի ուշադրութիւնը․ Եւրոպական թերթերը հաղորդեցին որ Կարմիր Համիտին լրտեսապետներէն մին՝ Մունիր պէյ, Բարիզէն շտապեր է Պրիւքսէլ հասկնալու համար թէ Հայասէրները ինչ կընեն հոն․ Դժբախտաբար Հայասէրները իրենց ժողովները գաղտնի ըրեր են, և իրենց մէջ ընդունած չեն ոեւէ թրքահպատակ մը․ գոնէ այդպէս հաղորդեցին եւրոպական թերթերը։

Համիտ վատահամբաւ չարագործի մը պէս ուշի ուշով կը հետեւի ամեն մի դէպքի որ կը վերաբերի իր ոճիրներուն ։

Բայց որո՞ւ հետեւի․ ամեն տեղ գաւազրութիւններ կը կազմուին Սուլթանին երկիրը պատառ պատառ ընելու ։

Ալպանիա, Մակեդոնիա, Արաբիա, Հայաստան, Սուլթանին ոճիրներուն այդ վրէժխնդիր վայրերուն զաւակները ամեն ճիգ կը թափեն արքայ—ոճրագործին եղեռնագործ խիղճը ոչ միայն անհանգստացնելու․ այլեւ անոր հըրէշային կոկորդէն փսխեցնել տալու իր կուլ տուած արիւնը,

Սուլթանը պիտի ապրի, պիտի ապրի մինչեւ որ իր զոհերուն թափօրդները իրենց վրէժը լուծեն իրմէ ։

* *
*

Ռուսիոյ մէջ երեւոյթական խաղաղութիւն կը տիրէ․ Ներքին գործոց նոր նախարարը իր ոստիկանական ամբողջ հանճարը ի գործ կը դնէ յեղափոխական ամեն մի ձգտում, ամեն մի տրամադրութիւն արմատախիլ ընել ։ Սակայն ուսանողութիւնը, ինչպէս կերեւի որոշած է նոր ուսումնական տարին սկսելուն պէս իսկոյն դժգոհութեան ցոյցը պարզել․ Ոստիկանական միջոցներով անկարելի պիտի ըլլայ առնել այն մեծ շարժումին առջեւ, որուն գիր կը նետուած է ռուս մտաւորապէս զարգացած և գործաւորներուն պահանջկոտ դասակարգը,

Շարունակ իրար հակասող լուրեր կուգան Ցարի մասին․ Մէկ ըսին որ ան մտադիր է մօտ երկու հարիւրի չափ մարդոց հետ, որոնք դժգոհ են երկրի ներկայ վիճակէն և կառավարութենէն, խորհրդակցիլ, մէկ ալ յայտարարեցին որ Ցարը Ռուսիոյ ամենէն պահպանողական մէկ խմբագիր մը, Իշխան Մեշչէրսքին, պիտի ղրկէ յուզուած նահանգները խռովութիւններուն պատճառները ուսումնասիրելու և իրեն տեղեկագրելու համար ։

Ցարն ալ, անձամբ բարի մարդ մը, ինչպէս կը յայտարարեն իր հակառակորդները, շուարեր մընացեր է այն սեւ նշաններուն առջեւ, որոնք կը գուշակեն ապագայ խոշոր փոթորիկները ։

ԿէՏ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԱՐԵԿԱՄՆԵՐՈՒ ՀԱՄԱԳՈՒՄԱՐՈՒՄԸ

Ֆրանգֆուրդէր-Ցայտունք ըստացած է յուլիս 17ին հետեւեալ հեռագիրները Բրիւքսէլէն ։

„Հայաստան բարեկամներու համագումարումը լաւ յաջողուած է, մանաւանդ Պելճիգայէն, Ֆրանսայէն և Տանիմարքայէն ։ Ներկայ էին հոն Պելճիգական երեսփոխաններ Լօրան, Հէկտոր Տընի․ Վանդերվէրդ, Պէրարան, Ֆուրնէմօն, ծերակոյտի անդամ Լաֆոնտէն և նախարարը, պրոֆէսորներ Էլիէ և Էլիզ Ռէկլիւ, Պօլ և Լէօ Կրէրա․ Ֆրանսայէն մասնաւորապէս եկած էն Ժօրէս և Պրէսանսէ ։

Գերմանիա, Աւստրիա և Զուիցերիա մինչեւ հիմա դեռ չեն մասնակցած ։ Ծերակոյտի անդամ Հուզէկօտ տը Լահէ կը նախագահէ ։ Պիէր Կիյար շատ բնորոշ կը նկարագրէ երկրի վիճակը ։ Աշխարհի ամեն ծայրերէն, մանաւանդ բնականաբար հայերէ, հեռագիրներ ստացուած են“ ։

*
* *

„Նախագահը իր բացման ճառին մէջ յայտնեց, որ նշանաւոր անձնաւորութիւններ ամեն կուսակցութիւններէ և ամեն երկիրներէ եկած են․ 2000է աւելի մասնակցող ձայներ հասած են իրեն ։ Նախագահը կը յուսայ, որ համագումարումը պիտի կարենայ շարժել կառավարութիւնը ճնշուած հայերը պաշտպանել, ծօն Պրիս իր գրութեան մէջ նոյն յոյսը կը յայտնէ ։ Փոխ նախագահ ընտրուեցան Տիկին Էնինկս Հօլանտայէն, Բասվէվից—Տանիմարգայէն և Պրէսանսէ—Ֆրանսայէն ։ „Պրօ Արմէնիա“ թերթի խմբագիր Պիէր Կիյար խօսեցաւ ոճիրներուն վրայ, որոց զոհերը հայերը դարձած են ։ Ան այսպէս գոցեց․ ազգու միջոց մը կայ ճնշումներուն վերջ մը դնելու համար, այն է, անուանել կառավարիչ մը, որը կը պատկանի չէզոք պետութեան մը և կընտրուի պետութիւններու հաւանութեամբ, յետոյ հաստատել տեղական ոչ—թրքական վինուորականութիւն ։ Սուլթանը միայն կրնայ այս խնդիրը լուծել, միայն այն է պատասխանատու ամեն պատահածներուն համար, բայց Եւրոպա պէտք է պահանջէ։ Պատերազմէ վախնալու աւելի պատճառ չըկայ հիմա, քան Կրէտէի դէպքին ատեն“ ։ Յետոյ համագումարումը կազմեց յանձնաժողովներ, վերջապէս որոշուեցաւ իւրաքանչիւր մասնակից երկիրներէ հինգական պատգամաւորներ ընտրելով կազմել մասնաժողով մը․ որը համագումարին կընէ գործնական առաջարկներ“ ։

ՄԱՐԶՊԵՏՈՒՆԻ

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

Զմիւռնիա 5 յուլիս 1902

Օրը օրին Պոլսական թերթերը մեզ կը բերեն նոր փախչողների երկար արձանագրութիւնը, որոնք բռնակալութեան լախտի ծանր հարուածներէն խուսափելով սարսափած հաւերի պէս հեռո՜ւ հեռո՜ւ կը թռչին ազատ ափեր եկերելու ։

Այս խուռներամ փախուստ ինքնիրմէ՛ որքան յուսադրիչ նոյնքան աւելի կործանիչ բնութիւն ունի Թուրքիայի համար ։ Մի կողմէն տառապանքի ընդհ․ ազգեցութեան տակ հեծողների մի ահագին բանակ կը գայ խտանալու թշնամեաց շարքերի դիմաց, միւս կողմանէ երկիրը հետզհետէ կ'ամայանայ երիտասարդ ուժերէ, արտաբերիչ ձեռներէ․ որոնք անգործութեան մատնելով տաճիկ ֆանաթիք ամբոխը, արագ, արագ անկում կը տանին գայն ։

Հայերի և Մակեդոնացիների բողոքները գնդակների մէջ կռուած՝ բռնակալութեան խախուտ շէնքի վրայ կը գան յարձակուիլ գոռ որոտով մը ։ Սպստամբ Արաբացին, հրացանը ուսին ձգած այրոյ անապատներին կռթնած, իր երէկուան նուիրական իրաւունքները կը պահանջէ զէնքի ուժով, մինչ խորթ հայրենիքին խորթ զաւակ թուրքը, զուրկ ազատ խոյանքներէ, գաղափարական կռուի մղող լայն պահանջներէ, կուշտ․ կուշտ կը փախչի օտար երկիրներ ։

Դժգոհ տարրերի այս յարաճուն քանակն երկրի անիշխանական, խարխուլ դրութիւնը, յեղափոխական գործիչին կը ներկայացնեն բացառիկ առաւելութիւնով օժտուած ասպարէզ, հող մը որը փորձառու ձեռների, ողջամիտ ղեկավարների շնորհիւ կարող է գործելու ահագին դաշտ մը լինելու ։ Երբ մի ժողովրդի մէջ թունդ կառնու յեղափոխական ալիքը նա ստիճանաբար կրակուելով, կը հրդեհէ ամբողջ մարմինը, մինչեւ զոհ կը գնայ յեղափոխական Սուրբ սեղանի վրայ։

Գերի ազգերի գոյութեան մեծ ճգնաժամերի մէջ յեղափոխութիւնները եղած են անոնց բախտը ճշդող կշիռքը․ այն է և միակ ճանապարհը մեզ հայերուս համար․ երէկ անոր մէջ գտանք մեր պաշտպանութիւնը․ անիկայ պիտի ըլլայ մեր վաղուան ապաստանը ։

Իզմիրցի հայը ոչ մի կերպով չի մասնակցեցաւ մեր յեղափոխական կեանքի շարժումներուն․ իր նիւթական անհուն առաւելութիւնները կարող էին լեցնել հայ ազգի մեծ պէտքը, ԶԷՆՔԸ ։

Յեղափոխականին կարուկ ձայնը պէտք է մի քիչ հնչէ ականջին որպէսզի մի քիչ սթափին իրենց մեծ քունէն, անտարբերութենէն ։ Այդ պատեհութիւնը արդէն ներկայացած կը տեսնենք հետեւեալ դէպքով որը ամբողջ Իզմիրը ալէկոծութեան մէջ կը պահէ ։

Ներկայ ամսոյս 2ին առաւօտեան ժամը 7 ու կէսի միջոցին, ինչպէս կը պատմեն, յեղափոխականները ռսալայատակի վրայ փըռած են հանրածանօթ մատնիչ Մաքսուտ Յովլանեանը, որը դեռ մի քանի օր առաջ սրճարանի մը մէջ խրոխտութեամբ կը պոռար․ „Այո՛, ես մատնիչ եմ, եթէ կը գտնուի մի կտրիճ յեղափոխական թող իմ դիմաց ելնէ“․ ահա էր երազածը իրականութիւն գըտաւ․ յեղափոխականին ուրուականը ցերեկ ժամանակ ցցուեցաւ իր առաջ և չորս գնդակներ մինը միւսէն սոսկալի եկան ծակելու իր մրոտ կուրծքը ։

Տարօսը միացեալներուն . . . ։

Ահաբեկիչները ազատ են ամեն վտանգէ ։ Ամբողջ քաղքի մի ծայրէն միւս ծայրը արձագանգած է լուրը․ ժողովրդի ոգեւորութիւնը անկարելի է նկարագրել, ամենուրեք զարկողների արիութեան մասին կը խօսին․ տպաւորութիւնը մեծ է և հրահրիչ․ հարուստ դասակարգերի մէջ հիացմունքով կը խօսուի այս դէպք․ միթէ Իզմիրի մէջ այսպիսի յանդուգն հայեր կը գտնուի՞ն եղեր կըսուի . . . ։

Ինչպէս կը թուի յեղափոխական գործող մարմիններ զգալով երկրի սուր պահանջները, լուրջ ջանքեր կընեն գործը յաջողութեամբ պսակելու, փոխանակ արտասահմանի կրկռան գործիչներու պէս պոռչտալու անձնական վէճերով զբաղուելու, որոնք այնքան վնասաբեր եղան անցեալին մէջ մեր ժողովրդի յառաջդիմական քայլերին ։

Գ.

Սեբաստիա 8 յուլիս 1905

Երէկ, ազգային արական վարժարանի սրահին մէջ՝ եկեղեցական արարողութեան վերջանալէ ետքը, տեղի ունեցաւ քաղաքիս Լուսաւորչեան Երկսեռ ուսանողաց

վիճակացոյցի բաշխման հանդէսը։ Միլիտարիաընակ հայ հասարակութիւնը ամբողջութեամբ ներկայ էր հոն։ Փոխնփոխ երգուեցան երգեր, ինչպէս նաեւ եղան արտասանութիւններ ուսանողներու կողմէն։

Ուսուցիչ պ. Մ. Էլմասեանը կարդաց տեղեկագիր մը, Օրիորդ Նէվրիկ Տաճատեան կրթական գործին վրայ տեսութիւն մը ըրաւ, իսկ, ներկայներէն խօսեցաւ հակիրճ կերպով պ. Արշակ Շալճեան։

Աւելորդ է ըսել թէ երգերը, արտասանութիւնները ինչպէս նաեւ խօսուածները սովորական տափակութենէն անդին չէին անցներ։ Չը նայելով այս տարի ամավերջի հարցաքննութիւնները շատ անյաջող ելք ունեցած են, չը նայելով որ արդէն հանդէսն ալ իր ամբողջով մանաւանդ ուսանողներու մտային դասարկութեան փաստը կը ներկայացնէր, կը յուսանք որ շատ քիչեր իրենց ներկայ դառն վիճակին վրայ դարման մը մտածեն, բան մը որ անհրաժեշտ է, քանի որ այսօր երկսեռ մանուկներու ճակատագիրը մեծ մասամբ յանձնուած է զառամ ծերուկի մը ձեռքը, որը ինչ ալ սորված, ինչ ալ տեսած ըլլայ անցեալի մէջ այսօր չոր ըլլալէ անդին չը կրնար անցնիլ։

Վստահ ըլլալով որ քաղաքիս վարչական մարմինները բոսծներս կ՚մբռնեն ու այժմ կը բաւականանամ այսչափով, սպասելով գործնական արդիւնքի, խոստանալով միեւնոյն ժամանակ գրել առաջին առթիւ անտեսուած կարգ մը պատասխանատուութիւններու մասին որոնց համար պահուած լռութիւնը ամեն կերպով դատապարտելի կը գտնենք։

ՃԱՆ

ԱԶԳԱՅԻՆ ՔՐՈՆԻԿ

Ստացանք „Գութան"ի թիւ 9 համարը։ Ըստ խմբագրութեան վերջին յայտարարութեան այսուհետեւ սոյն հանդէսին հրատարակութիւնը կանոնաւորապէս տեղի պիտի ունենայ։

Քաղաքիս բաժանորդք գուցէ մի քանի օր ուշ ստանան իրենց թերթերը գործակալին փոխուելուն պատճառաւ։

— Եւրոպայի „Հայ Ուսանողական Միութիւն"ը ֆրանսերէն գրութեամբ մը դիմած է Պէռնի մէջ կայանալիք մամուլի ներկայացուցիչներու համաժողովին՝ խնդրելով որ հայկական դատը պաշտպանեն։

— „Անահիտ" յօդուածով մը յայտարարած է որ Գ. եպիս. Երէցեան Սսոյ կաթողիկոսութենէն հրաժարեր է աւելի լուրջ և եկեղեցու շահերուն վերաբերող պատճառներէ դրդեալ։

— Պաքուի վաճառական բարեսէր Տիլտարեան մեռնելով 30,000 րուպլի կտակեր է աղքատներու բնակարան շինելու համար։

Մարդասիրական ընկերութիւնը որուն հին անդամներէն մին եղած է հանգուցեալը, առաջարկեր է որ այդ բնակարանները էջմիածնի անունով շինեն, որպէսզի կառավարութիւնը չը գրաւէ։

— Վառնայի հայ ուսուցիչները որոշած են կոչ մը ուղղել Պուլկարիոյ հայ ուսուցիչներուն ուսուցչական միութիւն մը կազմելու համար։

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ԹՈՒՐՔԻԱ

Սուլթանը, մինչեւ պարտքերու միացման ծրագրին իրագործուիլը, ելեւմտից նախարարին արտօնած է Պանք Օթոմանին հետ բանակցելու ձեռնարկութեան և մաքսային փոխառութիւնները միացնելու համար։

— Բ. Դուռը Ռուս կառավարութեան մերժած է վճարել 930,000 լիրան։

350 հոգիէ բաղկացած պուլկար հրոսախումբ մը, պուլկարական զօրաց նախկին գնդապետ Եանքօվի առաջնորդութեամբ, երեւցեր է Սթրումիցայի շրջակաները. և ընդհարում ունեցեր է թուրք զօրքերուն հետ. Թուրքերէն մօտ քսան հոգի սպաննուեր են։

ՊՈՒԼԿԱՐԻԱ

Գնդապետ Եանքօվ, որ 40 հոգիով անցած էր Մակեդոնիա գլուխ կայնած է հոն պայթած ապստամբութեան։ Եանքօվ գացած է յունիս 4ին և յունիս 23ին „Աթրումա" թերթի անօրէնին նամակ մը գրելով, հետեւեալը կը գրէ։

„Տրամադրութեան" տակ կը գտնուին հազարի չափ ընտրեալ երիտասարդներ. Սուլթանի զօրքերը խանդավառուած ն և մահերնին աչք առած վրէժ լուծելու համար։

Թուրքերը սարսափահար եղած են և կը դողան. կը մեկնիմ դէպի Գոսթուրա, զատ պուլկարներուն ողջոյն փնտապանծ Բիրինի բարձունքներէն. Կեցցէ յեղափոխութիւնը, կեցցէ ազատ Մակեդոնիան"։

Մ.Բ. կօմիթէին նախկին եռանդուն նախագահ Սարաֆօվ, որ տարիէ մը ի վեր արտասահման կը գտնուէր, այս օրերս Սոֆիա վերադարձեր է։

ԻՏԱԼԻԱ

Վենետկի Ս. Մարկոսի հաշտակաւոր աշտարակը, որ հին ճարտարապետութեան գլուխ գործոց կը համարուի փլեր է։ Այդ դէպքը մեծ ցաւ պատճառած է քաղաքակիրթ աշխարհին. ամէն կողմէ ցաւակցական հեռագիրներ կը ղրկուին Վենետիկ։ Կառավարութիւնը խոշոր գումար մը որոշեր է զայն վերաշինելու համար։

Հանգանակութիւն ալ բացուած է

Պրաի մէջ անծանօթ մը ձերբակալուած է որ անիշխանական կը կարծուի ու տրամադիր էր թագաւորին կեանքին դէմ դաւել։

ԱՆԳԼԻԱ

Լոնտոնէն կը հեռագրեն որ Սոլզպըրի այսուհետեւ իր պարապոյ ժամերուն մեծ մասը պիտի անցունէ իր գիւղին մէջ։ Ասկէց վերջը շատ քիչ անգամ պիտի գայ Լոնտոն լօրտերու ժողովին մասնակցելու։

—Զրոյց կայ որ ուրիշ նախարարներ ալ պիտի հրաժարին։

ԹՐԱՆՍՎԱԱԼ

Օրանժի նախկին նախագահ Շթէյնին, կաթուածահար եղած է և Եւրոպա պիտի երթայ բուժուելու համար։

ԳԵՐՄԱՆԻԱ

Լեհաստանի մէջ Գերման գաղթականութիւնը զօրացնելու համար կազմուած յանձնախմբին նախագահը հրաժարած է, որովհետեւ այդ յանձնախումբը ահագին դրամներ ծախսելով հանդերձ չէ կրցեր յաղթել Լեհացիներու դիմադրութիւնը։

ՖՐԱՆՍԱ

Վալտէք Ռուսօ յայտարարած է որ իր գերման կայսեր հետ ունեցած տեսակցութիւնը պատահական բան մըն էր. և այդ տեսակցութեան մէջ քաղաքական խնդիրներու վրայ բնաւ խօսուած չէ։

—Բարիզի արքեպիսկոպոսը բոլորքի նամակ մը գրած է նախագահին կրօնականներու դպրոցները փակուելուն համար։ Ուրիշ եպիսկոպոսներ ալ կը պատրաստուին նոյնը ընել։

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

«ԲԱՐԿԷՆ ՍԻՒՆԻ» ընթերցարանի մէջ կը ծախուի Ատոմ Եարճանեանի „Դիւցազնօրէն"ը ի նպաստ Հայ Ուսանողական Միութեան։

Գինն է 1 լէֆ արծաթ։

Կը ծախուի նաեւ «Ղարիպի Ազատութեան Ճանապարհին»։

Գինն է 90 սանթիմ

Վառնա

ԱՆՈՒՇԱՒԱՆ

ՀԱՅԻ ՀԱՄԱՐ

կամ

ԱՂՋԿԱՆ ՄԸ ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆԸ

Վէպ մը իրական կեանքէ

Մամլոյ տակ

Այս վէպը որ կը պարունակէ իր մէջ տեղական կեանքէ զանազան պատկերներ. հրատարակութեան յանձնուած է հեղինակին կողմէն և սիրով պիտի ընդունուին բաժանորդներ հրատարակութեան դիւրութիւն ընծայելու համար։

Բաժնեգինն է 1 ֆրանք. ռօսթի ծախքը հրատարակչին վրայ։

Տպագրութիւնը աւարտելուն գրքերը կը յանձնուին բաժանորդներուն։

Գոյանալիք հասոյթը ամբողջովին կը նուիրուի «Հայկական Կարմիր Խաչի» ընկերութեան։

Բաժանորդագրութեան համար դիմել հետեւեալ հասցէին։

Մուրատ Երանոսեան

(Պուլկարիա) ՎԱՌՆԱ

ԹԱՏՐՈՆ „ՊՈՐԻՍ"

Հաճի Բանաֆօ

Ամառնային շրջան

«Վ Է Ս Է Լ Օ»

Հայ դերասանական խումբն

Այսօր շաբաթ գիշեր ժամը 9ին

պիտի ներկայացնէ՝

ՄԻԱՆՁՆՈՒՀԻՆ

Ողբերգութիւն 2 արարուած

ԲԱՐԻԶՈՒ ԼՐԱԳՐԱՎԱՃԱՌ

Տրամ—Գոմէտի 4 արար

ԿԻՐԱԿԻ ԵՐԵ ՕՅԻՆ

պիտի ներկայացուի՝

ՆԱԽԱՆՁՈՏ ԱՅՐԸ

Թատերգութիւն 2 արար

ԱՃԸՔԼԱՐ

կամ

ՄՐՑՈՒՄ ԴԵՐԱՍԱՆ 8

կատակախաղ 4 արար

ԵՐԳ ԵՒ ՊԱՐԵՐՔ

Պ.Գ.Յակոբեանի եւ Օր. Ռոզալիի կողմէ

ՊԱԼԷԴ

Օրիորդ Բաւաֆօյի կողմանէ

Отговорникъ

Мурадъ-Ераносянъ

Печатница К. Николовъ — Варна